Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 5

«ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2

«31» «01» 2018թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Պողոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Արմեն Մանուկյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Թամարա Միրզախանյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան,
«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի լիազոր ներկայացուցիչներ՝ Անահիտ Ասրյան, Լիանա Ավագյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1 Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Արթուր Պողոսյան)

Որոշում թիվ 1

Հանձնաժողովը որոշեց հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
- «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից երկրորդ փուլի հայտի ներկայացման, բացման և գնահատման մասին.
- Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

1.2 «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հայտի ներկայացման մասին

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Արմեն Մանուկյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Թամարա Միրզախանյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

Հանձնաժողովի քարտուղար Արսեն Սողոմոնյանը ներկայացրեց, որ «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերը սահմանված կարգով ներկայացվել է մրցույթի նախաորակավորված մասնակից «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումին (այսուհետ՝ Մասնակից): Մրցույթի երկրորդ փուլի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում Մասնակցի կողմից ներկայացվել է հայտ: Մասնակցի՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտը ներկայացվել է 2018թ. հունվարի 30-ին ժամը 16:10-ին և գրանցվել է

գրանցամատյանում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.07.2017 թ. «Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի ստեղծման, ներդրման ու սպասարկման ծառայությունների գնման մրցույթի անցկացման կարգը և նշված համակարգի ստեղծման ու ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» N 850-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 39-րդ և 40-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց:

Որոշում թիվ 1.2

Հանձնաժողովը որոշեց.

1. «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻՆՖոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված՝ հայտ պարունակող ծրարը համապատասխանում է «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերով սահմանված կարգին,
2. Շարունակել գնման գործընթացը և բացել ներկայացված հայտն ու գնահատել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ – 0

2. «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հայտի բացման և գնահատման մասին

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Արմեն Մանուկյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Թամարա Միրզախանյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

2.1.1 Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը.

ՀՀ մշակութի նախարարության կազմակերպած «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հայտ է ներկայացրել «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻՆՖոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումը:

2.1.2 Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ երկրորդ փուլի հրավերով սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻՆՖոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացրած երկրորդ փուլի հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

2.1.3 Տվյալներ հայտով ներկայացվող փաստաթղթերի՝ երկրորդ փուլի հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան առկայության մասին.

«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻՆՖոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացրած երկրորդ փուլի հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝

1) իր կողմից հաստատված՝ ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում.

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված ընթացակարգի մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

2.1) իր կողմից հաստատված հայտարարություն՝ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին,

2.2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ պայմանագրի կատարման համար

անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին,

3) իր կողմից հաստատված գնային առաջարկ. որը ներկայացված է փակ՝ սոսնձված առանձին ծրարով, որի վրա կատարված են հրավերով սահմանված գրառումները:

4) հայտի ապահովում:

5) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր):

Որոշում թիվ 2.1

Հանձնաժողովը որոշեց.

1. Բացված ծրարում առկա են հրավերով սահմանված և պահանջվող փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

2. Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր) գնահատելու նպատակով՝ էլեկտրոնային փոստով ներկայացնել մրցութային հանձնաժողովի անդամներին:

3. Երկու փուլով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ մասնակցի տեխնիկական առաջարկի գնահատման նիստը հրավիրել 2018 թվականի փետրվարի 14-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ – 0

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, «14» «02» 2018թ.
Կառավարական տուն 2 ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Պողոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Արմեն Մանուկյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Թամարա Միրզախանյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան,
«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի լիազոր ներկայացուցիչներ՝ Անահիտ Ասրյան, Լիանա Ավագյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

2.2 «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից երկրորդ փուլի հայտով ներկայացված տեխնիկական առաջարկի գնահատման մասին.

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

- Հանձնաժողովի քարտուղար Արսեն Սողոմոնյանը ներկայացրեց, որ «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1»

ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻՆՖՈՏԵԽ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից երկրորդ փուլի հայտով ներկայացված տեխնիկական առաջարկը էլեկտրոնային փոստով ներկայացվել է հանձնաժողովի անդամներին: Տեղեկացվեց նաև, որ մասնակցի կողմից ներկայացվել է կոնսորցիումի անդամների միջև կնքված լրացուցիչ N 2 համաձայնագիր, համաձայն որի հայտի ապահովման կամ պայմանագրի ապահովման տուժանքը վճարելու պարտականությունը ընկնում է կոնսորցիումի Մասնակից 1-ի՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ-ի վրա:

- Հանձնաժողովի անդամ Արևիկ Խաչատրյանը ներկայացրեց իր դիտարկումը առ այն, որ մասնակցի ներկայացված տեխնիկական առաջարկում նախատեսվում է 5 լոկալ սերվերների կամ 5 համակարգիչ/սերվերների տրամադրում՝ Պատվիրատուի կողմից առաջարկվող առանձնահատուկ կարևորության օբյեկտների համար, սակայն պարզաբանման կարիք կա թե հրավերի N 4 հավելվածի N 3 հավելվածով ներկայացված «Էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգում (ԷՏՏՀՄԱՀ) ընդգրկվելիք Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների ցանկում» ներառված կազմակերպություններից որևէ մեկում անհրաժեշտ տեխնիկական պահանջները բավարարող համակարգչային տեխնիկայի բացակայության դեպքում ինչպես է նախատեսվում խնդրի կարգավորումը: Արևիկ Խաչատրյանի կողմից հարց բարձրացվեց նաև, թե տեխնիկապես հնարավոր է արդյոք ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից իր տեղեկատվական բազա ԷՏՏՀՄԱՀ բազայում առկա տվյալների ներմուծումն՝ առցանց եղանակով:

- Հանձնաժողովի կողմից նշվեց, որ նախաորակավորման հայտարարությամբ և երկրորդ փուլի հրավերով սահմանված է, որ «ԷՏՏՀՄԱՀ-ի ստեղծման, ներդրման, կառավարման և սպասարկման ծախսերն իրականացվելու են մրցույթի հաղթող ճանաչված ընկերության միջոցներով: Այս մոդելն իրենից ներկայացնում է պետություն-մասնավոր գործընկերության փոխշահավետ գործարք, որտեղ առանց պետական ֆինանսավորման, բացառապես մասնավոր տնտեսվարողի միջոցներով իրականացվում է այնպիսի համակարգի ներդրում, որի շահագործման արդյունքում՝ որոշակի ժամանակահատվածում տնտեսվարողը կստանա սահմանված վարձատրություն համակարգի միջոցով տոմսերի վաճառքի իրականացման

գործընթացից:»

Որոշում թիվ 2.2

Հանձնաժողովը որոշեց.

Հետաձգել մասնակցի ներկայացրած տեխնկական առաջարկի գնահատման գործընթացը և առաջնորդվելով հրավերի 9.14-րդ կետով դիմել Մասնակցին՝ գնահատող հանձնաժողովին ներկայացնելու պարզաբանում թե.

1. Մասնակցի կողմից ինչ քայլեր են նախատեսվում ձեռնարկվել վերոնշյալ կազմակերպություններում համապատասխան տեխնիկական պահանջները բավարարող համակարգչային տեխնիկայի բացակայության դեպքում:

2. Տեխնիկապես հնարավոր է արդյոք ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից իր տեղեկատվական բազա ԷՏՏՀՄԱՀ բազայում առկա տվյալների ներմուծումն՝ առցանց եղանակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ – 0

2.3 Երկու փուլով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Արթուր Պողոսյան)

Որոշում թիվ 2. 3

Հանձնաժողովը որոշեց հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Երկու փուլով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ մասնակցի տեխնիկական առաջարկի գնահատման հետաձգված նիստը շարունակել մասնակցի կողմից պարզաբանման ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, «21» «02» 2018թ.
Կառավարական տուն 2 ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Պողոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Արմեն Մանուկյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Թամարա Միրզախանյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան,
«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի լիազոր ներկայացուցիչներ՝ Անահիտ Ասրյան, Լիանա Ավագյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

3. «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկի գնահատման մասին.

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

- Հանձնաժողովի քարտուղար Արսեն Սողոմոնյանը ներկայացրեց, որ 2018 թվականի փետրվարի 14-ին կայացած «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի որոշմամբ սահմանված հարցադրումները՝ նախապես համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ, 2018 թվականի փետրվարի 16-ին ներկայացվել են «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումին: «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից 2018 թվականի փետրվարի 19-ին ներկայացված պարզաբանումները նույն օրը ներկայացվել են գնահատող հանձնաժողովի անդամներին:

- Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց գնահատել «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի որակավորման չափանիշները և տեխնիկական առաջարկը:

Որոշում թիվ 3

Հանձնաժողովը որոշեց.

«ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի 9-րդ բաժնի 9.10-րդ կետով սահմանված կարգով գնահատել «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի որակավորման չափանիշները և տեխնիկական առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

4. «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկի գնահատման արդյունքները հաստատելու մասին

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

- Հանձնաժողովի քարտուղար Արսեն Սողոմոնյանը ներկայացրեց, որ «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից համապատասխան գնահատման թերթիկներով գնահատվել է «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի որակավորման չափանիշները և տեխնիկական առաջարկը և հանձնաժողովի ընդհանուր գնահատման արդյունքը հետևյալն է՝

Հ/Հ	**Մասնակցի հայտի գնահատման չափանիշները**	**Մասնակցի՝ հայտի գնահատման արդյունքները**
1	Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը հրավերով սահմանված կարգին	Բավարար
2	Բացված ծրարում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին	Բավարար
3	Մասնակցի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը	Առկա է
4	Մասնակցի «Տեխնիկական միջոցներ» չափանիշը	Առկա է
5	Մասնակցի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը	Առկա է
6	Աշխատանքային ռեսուրսներ	25
7	Տեխնիկական առաջարկ (Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրի/տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին)	75
8	**Ընդամենը «Աշխատանքային ռեսուրսներ» և «Տեխնիկական առաջարկ» չափանիշների մասով**	**100**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**100**

Որոշում թիվ 4

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

2. Առաջնորդվելով «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի 9-րդ բաժնի 9.16-րդ կետով, հաշվի առնելով, որ մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հայտ ներկայացրած միակ մասնակից «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումը ներկա է հայտերի բացման և գնահատման նիստին՝ գնային առաջարկի բացման նիստը հրավիրվել անմիջապես:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

5. «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի գնային առաջարկի բացման նիստի մասին

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

- «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի 9-րդ բաժնի 9.17-րդ կետով սահմանված կարգով հանձնաժողովի քարտուղարի կողմից բացվեց գնային առաջարկ պարունակող ծրարը և հայտարարվեց «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի գնային առաջարկը՝ ԷՏՏՄԱՀ-ի միջոցով տոմսերի վաճառքից ստացված գումարից ակնկալվող վարձատրության չափը՝ արտահայտված տոկոսով, ընդհանուր գումարով՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

- «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի գնային առաջարկն է՝ 15 % (տասնհինգ տոկոս):

Որոշում թիվ 5

Հանձնաժողովը որոշեց.

1. Առաջնորդվելով «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի 9-րդ բաժնի 9.19-րդ կետով սահմանված կարգով՝ գնահատել «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

6. «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի հայտի գնահատման մասին

(Արսեն Սողոմոնյան, Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

«ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի հայտի գնահատման արդյունքը հետևյալն է.

Գնման առարկայի անվանումը	Մասնակցի անվանումը	մասնակցի առաջարկած գին (%)	ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3)	ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ	ՏԱ
Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի (ԷՏՏՀՄԱՀ) ստեղծման, ներդրման ու սպասարկման ծառայությունների ձեռքբերում	**«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիում**	**15**	**100**	**100**	**100**

«ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի մասնակից «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատվել է հետևյալ կարգով՝

1) որակավորված մասնակից՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի գնային առաջարկը առաջարկը՝ ԳՄ-ն գնահատվում է հարյուր միավոր՝ որպես նվազագույն գնային առաջարկ և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ,

որտեղ՝

ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

ՆԳ-ն նվազագույն գինն է և հավասար է 15 %,

ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է,

2) տեխնիկապես բավարար գնահատված մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3),

որտեղ՝

ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,

ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,

ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է:

Որոշում թիվ 6

Հանձնաժողովը որոշեց.

1. «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

2. Հանձնաժողովի քարտուղարին՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները տրամադրել հայտ ներկայացրած մասնակիցին.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում.

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

7. «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Արթուր Պողոսյան, Վահե Մահտեսյան, Կարո Պողոսյան, Կարեն Ղարիբյան, Գայանե Ղազարյան, Արման Գալստյան, Արևիկ Խաչատրյան, Վահե Նուրազյան)

Որոշում թիվ 7

Առաջնորդվելով «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի 9-րդ բաժնի 9.24 և 9.27-րդ կետով սահմանված կարգով՝

Հանձնաժողովը որոշեց հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Երկու փուլով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ ընտրված (հաղթող) մասնակցի որոշման նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվության ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10 դեմ - 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Արթուր Պողոսյան
Անդամներ՝		Վահե Մահտեսյան
		Կարո Պողոսյան
		Արմեն Մանուկյան
		Կարեն Ղարիբյան
		Գայանե Ղազարյան
		Թամարա Միրզախանյան
		Արման Գալստյան
		Արևիկ Խաչատրյան
		Վահե Նուրազյան
Քարտուղար՝		Արսեն Սողոմոնյան